2024Թ.-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ ՄՐՑՈՒՅԹԻ 3-ՐԴ ՓՈՒԼԻ

ՀԱՐՑԱՇԱՐ

Հարց 1: Շահութահարկ վճարող կազմակերպությունը ֆիզիկական անձից անհատուց վարձակալել է տարած, որի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 860 000 000: Որքան կկազմի կազմակերպությանը տվյալ տարվա համար կազմակերպության ներված պարտավորությունը.

Ա. 21 500 000

Բ. 17 200 000

Գ. 0,

Հարց 2: Շրջանառության հարկ վճարող կազմակերպությունը 02.06.2024թ.-ին դարձել է համատեղ գործունեության պայմանագրի կողմ, սակայն ըստ նշված պայմանագրի, կողմերը պայմանագրով սահմանված գործարքը պետք է կատարեն 01.08.2024թ.-ից: Կազմակերպությունը չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող՝

Ա. 02.06.2024թ-ից,

Բ. 01.08.2024թ-ից,

Գ. 01.01.2024թ.-ից,

Հարց 3: ՀՀ ռեզիդենտ ԱԱՀ վճարող համարվող միջազգային բեռնափոխադրումներով զբաղվով կազմակերպությունը կատարել է տրանսպորտային առաքման ծառայություն ՀՀ ռեզիդենտ կազմակերպության պատվերով՝ Բեռլի-Փարիզ: Նշված ծառայությունն ինքն իր հեթին պատվիրել է գերմանական բեռնափոխադրումներով զբաղվող կազմակերպության: ՀՀ ռեզիդենտին մատուցված ծառայությունը համարվում է՝

Ա. ԱԱՀ-ից ազատված գործարք,

Բ. ԱԱՀ-ի 0-ական դրույքաչափով հարկվող գործարք,

Գ. ԱԱՀ-ով հարկման օբյեկ չհամարվող գործարք,

Դ. Բոլոր պատասխանները սխալ են:

Հարց 4: Նշված ակտիվներից որն է դասակարգվում որպես ընթացիկ՝

ա. Վարձակալված հիմնական միջոցների վրա կատարված և կապիտալացված ծախսումները, որոնք ակնկալվում է, որ կփոխհատուցվեն ավելի քան մեկ տարի հետո

բ. Անավարտ արտադրանքը, որը ակնկալվում է, որ պատրաստի արտադրանք կդառնա ավելի քան մեկ տարի հետո

գ. Հիմնական միջոցը, որի արժեքը 50.000 դրամից պակաս է:

Հարց 5: Նշված ակտիվներից որը չի դասակարգվի որպես պաշար.

Ա. անավարտ արտադրանքը, որը նախատեսվում է ավարտուն վիճակի հասցնել հաշվետու ամսաթվից հետո ավելի քան մեկ տարվա ընթացքում

Բ. այն ակտիվները, որոնք արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար

Գ. այն առարկաները, որոնց գումարը էական չէ և որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում

Դ. այն ակտիվները, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

Հարց 6: Նշվածներից որը չի համարվում գործառնական գործունեություն՝

Ա. հիմնական միջոցների ձեռք բերումը,

Բ. հիմնական արտադրանքի վաճառքը,

Գ. հումքի, նյութերի վաճառքը,

Դ. օժանդակ արտադրանքի վաճառքը:

Հարց 7: Նշվածներից որոնք չեն համարվում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի և ֆինանսական հաշվետվությունների ներկայացնելու համար վավերացման ամսաթվի միջև տեղի ունեցած ճշգրտող դեպքեր.

Ա. դատարանի վճիռը ի վնաս կազմակերպության, որը հաստատում է, որ կազմակերպությունը հաշվապահական հաշվեկշռի դրությամբ արդեն ուներ պարտավորություն, որը մինչև հաշվեկշռի ամսաթիվը ճանաչված չէր

Բ. դատարանի վճիռը կազմակերպության օգտին, որը հաստատում է, որ կազմակերպությունը հաշվապահական հաշվեկշռի դրությամբ արդեն ուներ ակտիվ, որը մինչև հաշվեկշռի ամսաթիվը ճանաչված չէր

Գ. ֆինանսական հաշվետվություններում ներկայացված ժամանակաշրջանի արդյունքներով շահաբաժինների հայտարարումը,

Դ. տեղեկատվության ստացումը, որը ցույց է տալիս, որ դեբիտորական պարտքը հաշվապահական հաշվեկշռի դրությամբ անհավաքագրելի էր:

Հարց 8: Հիմնական արտադրությունում զբաղված աշխատակիցներին վճարման ենթակա ժամանակավոր անաշխատունակության նպաստների արտացոլում.

ա. Դեբետ 525

Կրեդիտ 527 ,

բ. Դեբետ 811

Կրեդիտ 527 ,

գ. Դեբետ 711

Կրեդիտ 527:

Հարց 9: Արտացոլվում է արտարժույթով արտահայտված՝ նյութերի գնման գծով կրեդիտորական պարտքի աճը արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքով.

ա. Դեբետ 521

Կրեդիտ 625

բ. Դեբետ 211

Կրեդիտ 521

գ. Դեբետ 342

Կրեդիտ 521:

Հարց 10: Արտացոլվում է շահութահարկի հաշվարկման նպատակներով կրեդիտորական պարտքերի դուրս գրումը.

ա. Դեբետ 521

Կրեդիտ 614

բ. Դեբետ 521

Կրեդիտ 331

գ. Դեբետ 942

2024Թ.-Ի ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ ՄՐՑՈՒՅԹԻ 3-ՐԴ ՓՈՒԼԻ

Խ Ն Դ Ի Ր

Կազմակերպությունն ստեղծվել է 2023թ.-ի մարտին: Կազմակերպությունը զբաղվում է մեծածախ առևտրով և արտադրությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում կատար է հետևյալ գործարքները.

Եկամուտներ

հ/հ	Գործարք	գումար	գումար
1	Ապրանքների իրացումից եկամուտ (առանց ԱԱՀ)	215 000 000	215 000 000
2	Տոկոսային եկամուտ	5 400 000	5 400 000
3	Վարձակալությունից եկամուտ	18 600 000	24 000 000
4	Պարտավորության ներումից եկամուտ	6 000 000	6 000 000
6	Նախկինում դուրսգրված դպ պարտքի վճարումից եկամուտ	2 000 000	2 000 000
7	Փոխարժեքային տարբերություններից եկամուտ	1 500 000	1 500 000
8	Արտարժույթով արտահայտված մնացորդների վերագնահատումից եկամուտ	2 500 000	-
	Ընդամենը	***251 000 000***	***253 900 000***

Ծախսեր

հ/հ	Գործարք	գումար	գումար
1	Մատակարարված ապրանքների ինքնարժեք	175 000 000	175 000 000
2	Աշխատավարձ	22 000 000	22 000 000
3	Ֆիզիկական անձանց վճարված օգնություն	1 000 000	63 475
4	Անհատույց ստացված ակտիվների իրացումից ինքնարժեք	2 000 000	2 000 000
5	ՄՀ մաշվածություն	12 000 000	12 000 000
6	Տոկոսային ծախսեր	3 000 000	1 000 000
	Ընդամենը	***215 000 000***	***212 063 475***

Լրացուցիչ տեղեկություն՝

1. Վարձակալության տրամադրված շուկայական արժեքին մոտարկված կադաստրային արժեքը կազմում է 1 200 000 000 ՀՀ դրամ,

2. Ծախսերի 4-րդ կետով նշված անհատույց ակտիվների մասով առկա է Հարկային օրենսգրքով սահմանված կարգով ստացված հարկային հաշիվ,

3. Ծախսերի 6-րդ կետով նշված տոկոսային ծախսերը ստացվել են ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանցից,

4. 31.12.2023 թ.-ի արդյունքներով կազմակերպության սեփական կապիտալը կազմել է 500 000 ՀՀ դրամ:

Որոշել

Որքան կկազմի կազմակերպության 2023թ.-ի շահութահարկը:

Պատասխան՝ 7 530 574: